Նոգեմալ գրահաւոր 2

հասարակ 65

Նաւ առաքանսաւոր 92 Գում. 159

ՇՈՒԷՏ—ՆՈՐԱԿԿԻՍ.

Սահմ. Կառավար.

Թագաւոր Շառլ Ժ. Ծն. 3 մայ. 1826.

— Գահ. 8 յուլ. 1859. — Ամուսն. ընդ

Վիլհելմինայ. (ծն. 5 օգոս. 1828) ի 19

յունիս 1850. Եղբ. Օսգար, Գահաժ. Եւի.

Ծն. 9 յուլ. 1836

Մայրաք. Սթոֆօլմ. Բնակիչ, 140, 251

— Գրօժ. Կապոյս վրան դեղին խաչիւ.
 դրօշակալին վերի անկիւնը Բառակուսի
 կարմիր եւ վրան դրանկիւն սպիտակ խաչ
 թիւ Բնակչացն. (1) Շուէսայ 4,173,080
 » » Նորվեկիոյ 4,701,756

Գում. 5,874,836

Շոգենաւ հասարակ 16

Սուազասաւոր փոքր մեծ 103 Գում. 119

ՊԵՂՃԻՔԱ.

Սահմանադր. Կառավարութիւն

Թագաւոր. Լէօփօլտ Բ. Ծն. 9 ապրիլ
 1835, որդի Լէօփօլտի Ա. — Գահակ. 10
 դեկ. 1865. — Սմուսնաց. քնդ Մարի Հան-
 րիէդ (ծն. 23 օգոստ. 1836) ի 22 օգոստ. 1853:
 Որդին. Լէօփօլտ-Ֆէրսինան, Գահաժառ.
 Էռիս. Ծն. 12 յունիս 1859. — Գրօժ Եռա-
 գոյն ուղահայեաց դրիւք, սեաւ, դեղին եւ
 կարմիր, սեաւը դրօշակալին կից.

Մայրաքաղ. Պրուսիա, Բնակ. 163,434
 թիւ Բնակչաց Երկրին 4,897,794

ՊՈՍՏՆԱԿԱ.

Սահմանադր. Կառավարութիւն

Կայսր. Փէրօ Բ. Ծն. 2 դեկ. 1825. —

Բնակչաց սակաւելուն պատճառն է զաղջակա
 նուծիւնն, որ 1868 ինը միայն՝ 9000 ի էլած է:

Գահակ. 7 ապրիլ 1831. — Ամուսն. քնդ
Թէրէզա-Քրիսթինա (ծն. 14 մայ 1822)
ի 4 սեպ. 1843.

Մայրամաղախ **Ռիչո—Սանկչո**, բնա-
կիչ 396,136. — Գրոց. Կանաչ եւ մէջն
նսկեգոյն յասակի վրայ Տերունակ. նիւան.
Թիւ բնակչաց Երկրին 11,780,000
Շոգեմաւ 52 եւ առագաս. 41. Գում. 63

ՌՈՒՍԻԱ.

Միապետական Կառավարութիւն

Կայսր Ալեքսանդր Բ. Ծն. 17/29 ապրիլ
1818. — Գահակ. 2/14 մարտ 1855. — 1^ժ ա-
գաղ. 26 օգոս. -7 սեպտ. 1856. — Ամուսն.
քնդ Մարիա Ալեքսանդրովնայ, Մեծի
ղխուհույն Հէստի (ծն. 27 յուլ. -8 օգոս.
1824) ի 16/28 ապր. 1841

Որդին. Ալեքսանդր Ալեքսանդրովիչ, Գա-
հաժառանգ Եւթան. Ծն. 26 փետր. -10
մարտ 1845.

Մայրամաղախ Պէթերզպուրկ, բնակիչ
559,475. — Գրոց. Տերունականն է դեղին,
վրան սեաւ արծուէնեաւ: Պատերազմա.
կանն է սիպակ եւ դրանկեայ կապոյտ
խաչիւ. իսկ հասարակն է սպիտակ, կա-
պոյտ եւ կարմիր, հորիզօնական դիւր

| | |
|------------------|--------------|
| Թիւ Բնակչաց երկ. | 78,490.000 |
| Շոգեճաւ գրահաւոր | 24 |
| » հասարակ | 276 |
| Նաւ առագաստաւոր | 37 Գում. 337 |

ՍՊԱՆԻԱ.

Սահմանադր. Կառավարութ.

| | |
|------------------------------------|--------------|
| Խնամապէտ. Սէռանօ Ի Տօսիկէզ | |
| Նորբնիք Թագաւոր. Ամէսէ Ֆէրսինանս, | |
| Տիւք ս'Ա.օսք. Ծնեալ 30 Մայիս 1845. | |
| Մայրաքաղաք Մասրիս, Բնակիչ | 298,426 |
| Թիւ Բնակչաց երկրին | 16,302,625 |
| Շոգեճաւ գրահաւոր | 7 |
| » հասարակ | 28 |
| Նաւ առագաստաւոր | 84 Գում. 419 |

ՏԱՆԸՄԱՐԻ

Թագաւոր. Բրիսթիան Թ. Ծն. 8 ապ.
1818. — Գահակ. 15 նոյ. 1863. — Ամուսն.
ընդ Լուիզ—Վիհէլմին (ծն. 7 սեպ. 1817)
ի 26 մայ. 1843.

Մայրաք. Քօթէնիակ, Բնակիչ 155,443
— Գրօք. Կարմիր, վրան սպիտակ խաչիւ.
Թիւ Բնակչաց երկրին 1,753,787.

ՓՕՐԹՈՒԿԱԼ

Սահմանադր. Կառավարութիւն

Թագաւոր. Լուի Ա. Ծն. 31 հոկ. 1838.

— Գահակ. 11 հոյ. 1861. — Ամուսն. քնդ
Պրայ (ծն. 16 հոկ. 1847) Իշխանահայոյն
Իսայիոյ, ի 6 հոկ. 1862.

Որդին. Ալֆօնս, Գահաժառանգ. Իշխան.
Ծն. 31 յուլ. 1865.

Մայրաքաղաք Ալաբաթ, Բնակ. 224,063

— Գրոց. Կապոյս եւ սպիտակ, Տերուա.
Կան նշանաւ .

Թիւ Բնակչաց Երկրին 4,347,444

Շոգ. 18. Առազուս. 24. Գում. 42

ՃՈՒՆՍՍ.

Հանրապետական Կառավարութ .

Վարչ. Առժամանակեայ

Առաջին պաշտօնեայ Կամպերրա.

Արսաբիկ գործ. » Ժիւլ-Ճավր.

Գրոց. Եռագոյն, կապոյս, սպիտակ եւ
կարմիր, ուղահայեաց դիւս, կապոյսք
գրոցակալին կից.

Մայրաքաղաք, Փարիզ. Բնկ. 1,825,274.

Թիւ Բնակչաց Երկրին 38,192,064

Շոգեկան գրահաւոր 63

» հասարակ 274

Նաւ առազուսաւոր 199 Գում. 536

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



Յուլիս 1868

1. Անգլիա. Սքոչիոյ և Իռլանտիոյ բարեկարգական խնդիրը Թագուհւոյն կողմանէ հաստատութիւն գտնելով՝ բարեկարգիչ անուն խորհուրդն ալ կը դադարի:

» Ամերիգա. Հայիթիոյ նախագահ Սալնավ կը յաղթուի ասպտամբներէն, Փոսթուսի մօտ. իսկ վերստին կ'ամրանայ Փոսթ օ Փոէնսի մէջ:

» Ամերիգա. Սէն-Տօմիսկ. ժողովուրդը վերստին կ'ասպտամբի ընդդէմ Պայէզ նախագահին և կը յաղթէ զնա Սայտօի մէջ. ուրիշ տեղերէ դէպ ի Սայտօ ճամբու հանուած զինուորները չեն ուզեր նաւ մտնել և ժողովրդեան դէմ պատերազմիլը կը մերժեն:

3. Հիւսիսային Գերմանիա. Բրուսիոյ Թագաւորն հրաման կընէ զինուորաց, որ Սատովայի պատերազմին Տաբեզարձը հրապարակաւ չտօնեն:

7. Սպանիա. Մ'օնփանսիէի դքսոյն հրաման կը տրուի կառավարութեան կողմանէ, որ Սպանիոյ սահմաններէն դուրս ելնէ բոլոր ընտանեօք : Նոյն ատենին՝ Սէռանօ սպարապետն ու բազմաթիւ զօրապետներ ձերբակալ լինելով՝ Քանարեան կղզիները կ'աքսորուին :

12. Հիւս. Գերմ. Ռուսաց Կայսրն ու Ռուսիոյ Թագաւորն ի Չըվալպախ կը հասնին, զիրար դիմաւորելու :

15. Տանքմարտ. Արքայազն իշխանը կը նշանուի Շուէտի և Նորվէկիոյ Արքայազին իշխանուհւոյն Լուիզի հետ :

17. Սէրպիա. Թուրքիոյ կառավարութիւնը հաւանութիւն տալով Երեսփոխանաց բուէի արդեանց, Միլանօ նորընտիր իշխանն իր Գահուն վրայ կը հաստատէ :

21. Պելճիա. Իտալիոյ Արքայազն իշխանն ու իշխանուհին ի Պրուքսէլ կը ժամանեն Թագաւորին այցելութիւն ընելու :

25. Հիւս. Գերմ. Համպուրկի մէջ Գերմանացի գործաւորաց ընկերութեան ընդհանուր ժողով մի տեղի կունենայ, ուր կ'որոշուի որ Գերմանացի գործաւորաց կողմանէ յատուկ Երեսփոխաններ ընտրուին, որոց ժողովին միջոցաւ ընդհանուր բարեկարգութեան հիմնարկութիւն մ'ըլլայ,

ի նպատտ ընդհանուր գործաւորացն Եւրոպիոյ :

30. Իսպիա. Հոռմէն Իտալիոյ անցած Քաւառներուն վերաբերեալ հասարակաց պարտուց տարեկան շահերը հատուցանելու համար՝ որոշումն կը տրուի, որ Իտալիան 17,000,000 ֆր. տարեկան վճարէ առ Պապն. վճարքն ալ Ֆռանսայի միջնորդութեամբն ի գործ կրուելու պայմանաւ :

Օգոստոս 1868

1. Ամերիգա. Հայիթի, Ապստամբաց բանակն երկրին ամէն հաղորդակցութիւնը կտրելով՝ դարձեալ կը յաղթէ: զՍալնավ, որ կըստիպուի իր բանակը ետ բաշել: Սէն-Տովինկի բնակչաց բոլորն ալ Սալնավի դէմ կ'ապստամբին: Այս ծովային՝ միանգամայն ցամաքային ճակատամարտները կը տեսն մինչև տարւոյն վերջերն, և ապստամբաց ուժին ու պաշարին սպառման հետ խաղաղութիւնն ալ կըտիրէ:

» Ֆրանսա. Ռօշֆօն՝ իր խմբագրած Լանժէոն (Լապտեր) անուն շաբաթական Հանդիսին պատճառաւ՝ կըդատապարտուի և կը փախի դէպ ի Պէլճիքա :

» Ամերիգա. Փէրմ. Պալժա անուն

զօրավարը Նախագահ ընտրուելով՝ իր պաշտօնական ուխտը կը կատարէ :

2. Հելլասա. Օլկոս Թագուհին արուզաւակ մի կը ծնի, որ Սեպտ. 3 ին մկրտովեւ ի Կաթողիկէ յԵկեղեցւոջ՝ Արքայազն Իշխանին անունը Կոստանդին կը կոչուի :

3. Սպանիա. Մօնիանսիէի դուքսն ու Դքսուհին՝ Լիզպօնէն զիր մի կուղղեն առ Թագուհին, բողոքելով անոր մէջ՝ ընդդէմ իրենց արտօման :

» Ամերիգա. Քիլի. Կառավարութիւնըն իր այս աւուր վճռով կը ջնջէ այն օրէնքը որ մարդը բանտարկութեան կը դատապարտէր պարտքի համար :

8. Աւստրիա. Քարաճօրճովիչ իշխանը՝ Փէշտայի մէջ ձերբակալ կընեն, Սէրպիոյ Միքայէլ իշխանին սպանման առթիւ :

22. Հարաւային Գերմանիա. Պավիէրոյի Գաթօլիկ կղերին կողմանէ յարձակումըն կըլլայ, ընդդէմ դպրոցական նոր օրինաց և պաշտօնէից աւագ Ժողովոյ Նախագահ Հօհէնլօհէ Իշխանին :

31. Չուիցերա. Երկրիս արևելեան գաւառաց մէջ հեղեղ կը պատահի, որոյ ջրերն ամէն տեղ կը ծածկեն ու մեծամեծ վնասներ կը պատճառեն :

Սեպտեմբեր 1868

1. Ռուսիա. Լեհաստանի Կուսակալ Փոթաթով Իշխանն արգելք կը դնէ, որ Թաարոնաց, Կերակրատանց և ամէն հասարակաց վերաբերեալ տեղեաց մէջ Լեհերէն լեզուն չգործածուի: Նոյն արգելքը կը դնէ նաև Եկեղեցեաց և Դպրոցաց մէջ և աղօթից գրքերն ալ Ռուսերէնի դարձնելու հրաման կուտայ:

—Արդևօք Փրկեսցէ զիս Տէր ի Թշնամեաց իմոց հզօրացին Ռուսերենն ինչպէս է—:

3. Ամերիգա. Միացեալ Նահանգք. Ճօրճիայի Երեսփոխանական ժողովոյն մէջ կ'որոշուի որ Խափշիկներն անդամակցութեան իրաւունքէ զրկուին. Այս որոշման վրայ 25 Խափշիկ անդամք՝ երեսփոխանական սրահէն դուրս կ'ելնէն:

7. Հիւս. Գերմ. Բրուսիոյ Թագաւորն ի Տրէստ կը ժամանէ, Սաքսօնիոյ զօրաբանակին ընդհանուր կրթութեան ներկայ գտ'ուելու համար:

8. Հոռնա. Արևելեան բոլոր եպիսկոպոսունք կը հրաւիրուին Պապին կողմանէ, որպէսզի Առաքելական գահուն հետ միանալով՝ Տիեզերական ժողովոյն մասնակցին: Նոյն հրաւերքը կըլլայ, ամսոյս

13 ին, Գաթօլիկ չեղող եպիսկոպոսաց :

9. Ամերիգա. Միաց. Նահ. Ճօրճիայի կուսակալն՝ Երեսփոխանաց ամսոյս 3ին ըրած որոշման դէմ կը բողոքէ, իսկ ժողովն իր որոշման վրայ հաստատ մնալով՝ պատասխան կուտայ նաև՝ Թէ անդամակցութեան խնդրոց իրաւունքն իրեն միայն կը պատկանի :

11. Անգլիա. Իռլանտիոյ Գաթօլիկ եպիսկոպոսունք Քօրքի մէջ ժողով կը կազմեն, Կլասթընի նուիրակութիւնը (քանտիտամիւր) պաշտպանելու համար :

» Ֆռանսա. Կայսրն իր որդւոյն հետ՝ ամսոյս 3 էն մինչև ցայսօր՝ Շալօնի բանակին այց ընելէն յետոյ՝ դէպ ի Պիարից կը մեկնի :

12. Ամերիգա. Միաց. Նահ. Ճօրճիայի Ծերակոյտն ալ իր որոշումը կուտայ Խափշիկներն ընտրելեաց ցանկէն դուրս ձգելու :

» Սպանիա. Փրիմ, Սէռանօ և այլ արքորեալ սպարապետք ի Սպանեայ կը դառնան, յեղափոխութեան (ռէվօլիւսիօն) միտումը զօրացնելու, որով և Էլիզապէթի գահուն վերջնական հարուած մի տալու նպատակաւ :

16. Հիւս. Գերմ. Սաքսօնիոյ ոստիկա-

նութիւնը Սարսի մէջ գտնուած Գերմանացի գործաւորաց ընկերութեան ճիւղը (որ յուլիս 23 ին Համպուրկի մէջ ընդհանուր ժողով մ'ըրաւ) բոլորովին կը քայքայէ : — Անշուշտ, որովհետեւ գործնական կամ ժողովրդային միութիւնը մեղանշանք կը համարուի կառավարութեան առջև . . . ինչպէս որ յիմար գործարանապետաց առջև գործաւորաց միութիւնն ու զարգացումն (փոխանակ առաւելութեան և զարգացման իւրեանց գործարանի) ըստ ամենայնի վընասակար կը համարուի — :

17. Ս.Աերիզա. Միաց. Նասի. Ճօրճիայի Երեսփոխանական ժողովն կը զրկէ զՄափշիկս նաև դատաւորական պաշտօնի իրաւունքէն :

» Սպանիա. Սկիզբն հեղափոխութեան. Թօփէք ծովապետն յայտարար մի կը հըրտարակէ (Սարակօս անուն պատերազմական նաւէն որ յերկամի կեցած էր Քատիբսի նաւահանգստին մէջ) խոստանալով զլուխ կենալ յեղափոխութեան : Փրիմ սպարապետն ալ նոյն իսկ նաւն ելնելով անմիջապէս կը միանայ Թօփէթի հետ :

18. Սպանիա, Քատիբսի մէջ գտնուող արքունի և քաղաքական զինուորք կը միանան Թօփէթի և Փրիմի հետ :

19. Սպանիա. Փրիմ' յորդորելով բոլոր զՍպանիացիս' հրաւիրէ զանոնք յեղափոխական դրօշին տակ : Նոյն ատենին արտօրեալ զօրապետաց բոլորն ալ կը ժամանեն ի Քատիքս ու (Թօփէթի և Փրիմի հետ միախորհուրդ) յայտագիր մի կը հրատարակեն, ասելով' Թէ ապստամբութեան նպատակն ուրիշ բան չէ' բայց եթէ Սպանիոյ ընկերական ու քաղաքական վիճակը վերանորոգել : Նոյն աւուր մէջ Անտալուզիոյ (Հին Լուսիտանիա) բնակչաց մեծագոյն մասն ապստամբական դրօշը կը բարձրացնէ առանց արեան կամ սկզբնաւորութեան պատերազմի :

20. Սպանիա. Մատրիտ քաղաքը զինուորական տեսչութեան կ'եննծարկուի. Նովալիքէս (Թագուհւոյ մարդն) սպարապետն իր բանակաւն յԱնտալուզիայ կը դիմէ պատերազմելու համար, ընդէմ ապստամբութեան :

21. Հաւաւային. Գերմանիա. Պափիէրայի, Վիլրթէմպէրկի և Պատի կառավարութիւնք, միաբան խորհրդով, զինուորական խորհրդարան մի կը հաստատեն Հաւաւային Գերմանիոյ բերդերուն խնդիրը կոկելու նպատակաւ :

22. Սպանիա. Ապստամբութիւնը Հին.

Գասթէլիոյ և այլ տեղեաց մէջ կը պայծի՝ Սէռանօ՝ բանակին գլուխն անցած՝ կ'արշաւէ դէպ ի Գօտովա (Մատրիտէն 72 մը-դոն հեռի), ճակատամարտելու ընդդէմ Նովալիբէսի: Նոյն աւուր մէջ՝ պատերազմական նաւերն կը մեկնին Սան-Սէպասթիէնի նաւահանգստէն՝ առանց Թագուհւոյ հրամանին:

24. Հիւս. Գերմ. Հէսի իշխանն շրջաբերական կը դրկէ Եւրոպիոյ բոլոր աէրու-թեանց, բողոք բառնալով ընդդէմ ընծացիցն Բրուսիոյ որոյ կառավարութիւնն ուրիշ բան ըրած չէ, 1866 էն ի վեր, բայց եթէ յափշտակութիւն իրաւանց:

— Բան չունի նէ Թող գրէ Պիզմարբիականջն (քէօզ տիյնէմիշ) այդպիսի Թըմբուկներու սովորած է —:

25. Սպանիա. Նովալիբէսի բանակին առաջապահ մասը Սէռանօի բանակին հետ կը միանայ:

26. Սպանիա. Անտալուզիոյ ծովեզերեայ բնակչաց բոլորն ալ Փրիմի կը յարին, նոյնպէս Գարթակէնացիք, երբ մանաւանդ Փրիմ իր նաւատորմովն այնտեղ կը ժամանէ:

27. Հիւս. Գերմ. Ռուսիոյ Կայսրն Փօթըստամ կը ժամանէ, յայցելութիւն Բրուսիոյ

Թագաւորին և կը մեկնի հետևեալ աւուր
երկոյնին :

28. Սպանիա. Սէռանոյին ու Նովալի-
քէսի բանակներն Ալքոլիայի մօտ կը պա-
տերազմին. Սեռանոյի մասն յաղթող կը
հանդիսանայ. և Նովալիքէս վտանգաւոր
վէրք մի կ'ընդունի :

—Պռնիօ. Նափօլէօնին երեսը սեւ կենայ—:

29. Սպանիա. Մատրիտ մայրաքաղաքն
ալ ապստամբաց հետ կը միանայ և առ-
ժամանակեայ ժողով կը կազմէ ընդ նախա-
զահուծեամբ Մարտագի :

30. Սպանիա. Պարչէլօնա (Մատր. 124
մղ.) և Զարակօզա (Մատր. 69 մղ.) քա-
ղաքներն ալ ապստամբաց հետ կը միանան:
Մատրիտի առժամանակեայ ժողովոյն կող-
մանէ պաշտօնական յայտագիր մի կը ծա-
նուցանէ բոլոր Սպանիացոց՝ Թէ Թագու-
հին անկեալ է Սպանիոյ զահէն, և Թէ
Պուրպօնեան ցեղն անկարող համարուած է
կառավարել զՍպանիա : Սոյն աւուր մէջ՝
Թագուհին կը մեկնի ի Սան-Սէպասթիէնէ
դէպ ի Ֆռանսա :

» Ֆռանսա. Էլիզապէթ գահագուրկ
Թագուհւոյն դէպ ի Փօ ճամբորդութիւն
ըրած ատեն՝ Կայսերական գերդաստանն
կը դիմաւորէ զնա ի կայանն Պիարիցի :

Հոկտեմբեր 1868

1. Անգլիա. Կլամօրն իր առաջադրութեան մէջ յայտարարութիւն կրնէ, ասելով, թէ ինորոց մէջ ամենէն կարևորն իռլանտիոյ վերաբերեալն է, ուր խաղաղութիւնն ուրիշ միջոցաւ չը կրնար հաստատուիլ բայց եթէ Պետութեան կրօնքը ջնջուելով:

» Իսպիա. Կառավարութեան կողմանէ երկրորդ անգամ առաջարկութիւն կը լայ Ֆռանսային, որ Հոռմի զօրքը յետ կոչէ. բայց Ֆռանսան (Մարքի տը Մուծիէն) կը մերժէ զայն:

» Սպանիա. Սահմանադրական ժողովոյ մը բուէարկութիւնը կը կատարուի, այս ժողովն առժամանակեայ Կառավարութեան կը յաջորդէ:

3. Սպանիա. Էլիզապէթ՝ Սպանիոյ գահագուրկ թագուհին՝ բողոքագիր մի կը հրատարակէ ընդդէմ գահագրկողութեան:

4. Սպանիա. Սեռանո մարաչախա առժամանակեայ Կառավարութեան գլուկանուանի:

9. Սպանիա. Միացեալ նահանգադէսպանն Սպանիական նոր կառավարութիւնը կը ճանաչէ ի պաշտօնէ:

11. Սպանիա. Ժողովուրդն Հոռմի ու

զայրացած՝ Քահանայապետական դաշնադրրագիրը կայրէ, պտպական Նուիրական տան հրատարակին վրայ :

16. Ամերիգա. Միաց. Նահ. Քառօրինա նահանգին Ծերակուտի տնդամ՝ միանգամաւն քարոզչութեան պաշտօն ունեցող Ռանտօլֆ անուն խափշիկ մի՝ հրացանաւ կապանաւի Քօրէսվիլի մէջ : — Երևի թէ խափշիկ ծնելն ու թերորդ մահացու մեղք կամ առաջին յանցանք համարուած է — :

19. Սպանիա. Մենարան, Կուսաստան, Փակարան և այլ սոցա նման հաստատութեանց բոլորն ալ պաշտօնապէս կը ջընջուին և նոցա կալուածներն Ազգային սեպհականութիւն կը դառնան :

— Մեր վանքերն ի վաղուց Ազգային սեպհականութիւն համարուած են, և երևի թէ անոր համար է որ Հայերն յեղափոխութեան կարօտութիւն չունինք կըսեն — :

21. Ամերիգա. Քալիֆօռնիոյ մէջ սաստիկ գետնաշարժ մը կը լինի :

23. Սպանիա. Կատարեալ և անասնման ազատութիւն կը տրուի Տալադրութեան կամ Մամլոյ, պաշտօնական յայտարարութեամբ :

24. Ամերիգա Միաց. Նահ. Նուվէլ-Օռլէանսի սպիտակներն ու խափշիկներն

իրենց խօսարանաց ակումբներով դէմ առ
դէմ կը պատերազմին սաստկապէս :

— Այս ըսել է շէնք շնորհք իրարու զլուխ
պատուել . Խափշկաց բազմաթիւ յանցանաց
երկուքն առաջին կարգի համարուած են .
մին սեաւ ծնելնին , երկրորդն ալ մարդու
իրաւունք վայելելու փափաքնին : Այսպիսի
մահացու յանցանքն երեւի թէ սպիտակաց
ջղերուն սաստկապէս կը զպի — :

26. Զուիցէրա . Երկրիս արևելեան գա-
ւառաց մէջ ամենասաստիկ հեղեղ պատու-
հելով՝ մեծամեծ փեսաներ կը պատճառի :

» Սպանիա . Առժամանակեայ կառա-
վարութիւնն յայտարար մի հրատարակե-
լով՝ յեղափոխութեան բուն նպատակին
բացատրութիւն կուտայ , խնդիրն այս կեր-
պիւ եզրակացնելով ,

Ազատութիւն Կրօնից .

Ազատութիւն Ուսման .

Ազատութիւն Մամլոյ .

Յարումն ընելով՝ ասէ նաև , թէ Առժա-
մանակեայ կառավարութեան փափաքն է՝
սահմանադրական Միապետութեան մը հիմ-
նարկութիւնն ընել : — Ուրեմն էլ իզապէժն
ինչ ունէր . և միթէ գալիք Միապետն եր-
կինքէն պիտի իջնէ : Այդ ըսել է յեղափո-

խուժիւն մի ևս պատրաստել . դարձեալ
արիւն . . . Աստուանձ կարողութիւն տայ—:

Նոյեմբեր 1868

1. Ամերիգա. Մէքսիքայի հարաւային
արեւմտեան կողմերը մրրկայոյզ փոթորիկ
մի սկսաւ ու երեք օր անդադար փչելով
գիւղեր ու փոքր քաղաքներ կործանեց:

3. Ամերիգա. Միաց. Նահ. Նախագահ-
հուժեան քուէարկութիւնը լրանալով՝
Կոանձ զօրապետն Նախագահ և Կօլֆէքս
Փոխանորդ Նախագահի կ'ընտրուին:

9. Չինաստան. Անգլիական տորմիդն ի
Նանքէն ժամանելով՝ Հօնկ-Չուի մէջ՝ քա-
րոզչաց դէմ ի գործ դրուած անիրաւու-
ժեանց համար՝ կառավարութենէ լիովին
հատուցումն և փոխարինութիւն կ'ստանայ:

9. Ամերիգա. Միաց. Նահ. Արքան-
զաս Նահանգի ապստամբական յուզմունքն
օրըստօրէ զօրանալուն և սպառնալից դիրք
մ'առնելուն պատճառաւ՝ Սայթըն անուն
գաւառապետն կը պարտաւորի բանակ մի
կազմել, 60,000 զինուորէ բաղկացեալ:

11. Ամերիգա. Միացեալ Նահանգաց և
Անգլիոյ կառավարութիւնք որոշումն կու-
տան՝ Ալապամայի խնդրոյն լուծուձը իրա-
ւադատ ատենի մը ենթարկելոյ:

18. Ճափօն. Գահաժառանք Իշխանն ի կառարելութեան հասանելով՝ Միգասո (Կայսր) կը հրատարակի :

20. Ամերիգա. Միաց. Նահ. Արքան-գասի Քիւ Քլիւքս կոչուած ապստամբաց խմբին ու կառավարութեան զօրաց մէջ ճակատամարտ մի տեղի կունենայ և Քիւ Քլիւքս կոչուածները կը յաղթուին :

21. Հելլասա. Արտաքին գործոց Պաշտօնեայն՝ յայտարարութիւն կընէ Երեսփոխանաց ժողովոյն թէ կառավարութեան փափարն է՝ Յունաստանի կցել զԿրետէ :

24. Հոռնա. Մօնթի և Թօնիէթի ի մահ կը դատապարտուին :

29. Աւստրիա. Հոնկարիոյ Երեսփոխանական ժողովոյն կողմանէ վճիռ կըարուի որ Հոնկարացոց լեզուն օրինաց և պաշտօնական գրութեանց մէջ գործածուի, որով որոշոր Հոնկարացիք անով ալ քաղաքակա-նապէս կըմիանան :

Գեկեմբեր 1868

1. Ամերիգա. Փէրու. Ազատութիւն կըարուի բոլոր օտարական նաւերու, որ երկրին ամէն նաւահանգիսները կարենան ելլամտել :

2. Ամերիգա. Քալիֆորնիոյ մէջ՝ քա

նի մը գիւղ ու գիւղաքաղաք հիմնա-
յատակ կըլլան Գետնաշարժի ցնցմամբ :

3. Ֆռանսա. 1851 Դեկտ 3 ին Փարի-
զի յեղափոխական քարակուտից վրայ
սպաննուող Պօտէն անուն Երեսփոխանի
Տարեդարձին պատճառաւ՝ կառավարու-
թիւնն իր զգուշութիւնները կ'առնու ընդ
դէմ ժողովրդեան :

5. Աւստրիա. Պարօն տը Պայսթ (Աւրս-
տրիոյ կառավարութեան առաջին Պաշ-
տօնեայն) Կոմսութեան տիտղոս կըստանայ :

» Թուրքիա. Բարձրագոյն Գուռը՝ տես-
նելով որ Հելլենական կառավարութիւնն
անդադար օգնութեան կը հասնի Կրետէի
ապստամբութեան՝ որոշումն կուտայ զօ-
րաւոր միջոցի դիմելու և նաւատորմը ճամ-
բու կը հանէ դէպի Միջերկրականծով, ընդ
հրամանատարութեամբ Հօպարթ Փաշայի :

11. Հելլասա. Թուրքիոյ Դեսպանին կող-
մանէ վերջնագիր կըտրուի կառավարու-
թեան, որով կը պահանջուի՝ Թէ Էնօսիս
անուն շոգենաւի երթեկեկութեան դադար-
ութեամբ և Թէ Կրետացոց օգնութեան եր-
թալու համար կազմուած կամաւորաց
խմբին եղծանութեամբ :

14. Թուրքիա. Հօպարթ Փաշան զէնօսիս
հալածելով՝ մինչև Շիրայի նաւահանգիստը

կը բշէ զայն, Օմէր Փաշան ալ Թէսալիոյ կողմերը կը կեդրոնանայ իր բանակաւ :

15. Թուրքիա. Հելլենացի կառավարութեան կողմանէ առ Բարձրագոյն դուռն ուղեալ վերջնագիրը կը մերժուի, և բոլոր Հելլենական հպատակները Թուրքիայէն արտաքսելու որոշումն կը տրուի :

18. Ֆռանսա. Մարքի տը Լավալէթ արտաքին գործոց Պաշտօնեայ կանուանի, վախճանեալ Մարքի տը Մութիէին տեղ :

20. Իտալիա. Տէլլա Ռօքքա զօրապետն Արքայի կողմանէ Պապին ներկայանալով կը խնդրէ որ մահու դատապարտեալ Մօնթի և Մօնիէթի անձանց կեանքը շնորհէ . Պապն զԶօրապետ կընդունի շնորհալի կերպիւ . բայց կենաց շնորհքը կը մերժէ :

23. Ֆռանսա. Մօնիթէօն անուն Լրագիրը պաշտօնական լինելէն կը դադրի և անոր տեղ Վէռիթէ անուամբ նոր Լրագիր մի կըսկսի հրատարակիլ, Պաշտօնական տիտղոսով . — Տըլապուլէի Փռէնս Բանիշ վերնագրով գրքին մէջ Վէռիթէ Օֆիսիէլ (Պաշտօնական ճշմարտութիւն) անուն Լրագրոյ մը խնդիր կը տեսնուի, որոյ մէջ ստուծիւնը մըջման պէս կը վխտայ. . . Մի գուցէ Տըլապուլէի ակնարկութիւնն այս նոր Վէռիթէին համար եղած լինի — :

24. Ֆռանսա. Թուլուզի արդարութեան Ատենին Տէրունական փոխանորդ Պարօն տը Սէկիէ՝ իր պաշտօնէն կը ձգուի՝ տը-պագրութեան վերաբերեալ դատերուն մէջ մեղմութեամբ վարուելուն պատճառաւ : — Միապետք՝ եթէ գերբնական կարողութիւն ունենային, տարակոյս չկայ որ պիտի աշխատէին ժողովրդեան շրժանց վրայ մը-սեղէն կղանք մի դնել, կամ անոնց լեզուներն երկամեղինէ շինել և կամ աղիլարով (քիրիշ) հիւսել զանոնք, որպէսզի Հն ըսած ատեննին կարենային զանոնք պապնձեցնել կամ ուզած եղանակնին անոնց չալել տալ —

25. Ամերիգա. Միաց. Նահ. Նախագահ ձօնարն ընդհանուր ներողութիւն կը հրատարակէ :

26 Չինաստան. Անգլիացիք իրենց հը-պատակաց դէմ եղած անպատուութեան օրինաւոր հատուցման համար երկար ժամանակ սպասելէն և Ֆու-Չիուէն ալ նը-պատաւոր պատասխան մի չառնելէն յետոյ՝ Թայվան-Ֆուի նաւահանգիստը կը-ռըմբակոծեն ու Ջելանտիա անուն բերդին կը տիրեն : Այս դէպքէն յետոյ՝ Չինաստանցիք Անգլիացոց պահանջքը լիուլի կատարելով՝ Ֆու Չիուի կուսակալն ալ պաշտօնէ կը ձգեն :

Յուլիար 1869

4. Ռուսիա. Քարատաղի իշխանն այցելութիւն կընէ Կայսեր, ի Փէթէրսպուրկ. յորմէ մասնաւոր պատուով կ'ընդունուի :

7. Թուրքիա. Դեսպանաժողովոյն կազմութեան համար կառավարութիւնն իր հաւանութիւնը կուտայ և Փարիզի դեսպանին հրահանգ կը դրկէ : Հօպարթ Փաշան ալ՝ Շիրայի պաշարումը վերցնելով՝ նաւատորմը ետ կը քաշէ :

9. Ֆրանսա. Հելլենո-Թուրքի խնդրոյն համար կազմուած Դեսպանաժողովն իր առաջին նիստը կընէ :

11. Սպանիա. Առժամանակեայ կառավարութիւնն յայտարար մի կը հրատարակէ իբր հրահանգ ընդհանուր ընտրողաց, և անոր մէջ իր փափարն յայտնելով՝ Ղնտրեցէք, ասէ, այնպիսի անձինք, որ Թագաւոր մ'ընտրելու արամադրութիւն ունենան : — Երևի թէ Սամուէլ մարգարէին պատիժ ու պատուհաս համարած Թագաւորուշ իւնն օրհնութեան կամ շնորհքի տեղ առնուած է (ըստ Սպանիոյ Առժամանակեայց մեկնութեան), նայինք որ Սաւուղ իր հօրն էշերը փնտրուելու պիտի ելնէ. և (Սամուէլին տեղ) Սպանիոյ Քուէից առաւելութեան պիտի հանդիպի... — :

13. Ամերիգա. Միաց. Նահ. Հայիթիոյ և Սէն Տոմինկի Հանրապետութեանց վրայ պաշտպանութիւն ընելու գաղափարն, (որ Պէնքս անուն Երեսփոխանի կողմանէ առաջարկուած էր) Երեսփոխանաց ժողովոյն կողմանէ մերժուեցաւ : — Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան յայտ մասին ունեցած սկզբանց վրայ լաւ տեղեկութիւն չունեցող անձինք այնպէս կարծեցին ի սկզբան՝ թէ Ֆուանսայի նոր Հանրապետութիւնն ուժեղ պաշտպանութիւն պիտի զըտնէ նոյն Հանրապետութենէ, բայց այս մերժողական որոշումն ըստ բաւականին կը բացատրէ թէ սրբան տարբերութիւն կայ նոցա կարծեաց և ամերիգեան Սահմանադրութեան սկզբանց մէջ — :

14. Անկլիա. Լոռտ Քլէրէնտըն և Ռըվերտէյ Ճոնսըն՝ Ալապամայի խնդրոյն վերաբերեալ դաշնագիր մի կը կնքեն և երկու կողմանէ գործակալներ կը կարգուին, այն խնդիրն ի հիմանէ քննելու և երկու տարուան միջոցին ի կատար հասցընելու պայմանաւ :

21. Հելլասա. Կրետէի ապստամբութեան օգնական գացող Փէթրօքուլարին և իր կամաւոր զօրաց խմբեակն անձնատուր կը լինին ու ղէպ ի Շիրա կը տարուին: Կառա-

վարուծիւնն ալ Եւրոպիոյ պետութեանց խորհրդոյն անսալով՝ Հելլենո-Թուրքական խնդրոյն լուծումը Փարիզի դեսպանաժողովոյն որոշմանը ձգել յանձն կ'առնու :

24. Սպանիա. Պուրկոսի կուսակալն այնտեղի Մայր Եկեղեցւոյ դիւանատան Թղթերուն Յանկը շինելու ատեն քահանայէ մը կը սպաննուի :

25. Հելլասա. Փարիզի դեսպանաժողովոյն առաջադրած պայմանաց պատասխան տալով՝ Կառավարութիւնն ցաւ կը յայտնէ, Հելլատայի դեսպանին այդ ժողովէն դուրս ձգուելուն վրայ, և ժողովրդեան դժգոհութիւնը նկարագրելէն յետոյ՝ ժողովոյն միահաւանութեանը գլուխ կը ծռէ և պայմանաց սկզբունքը կ'ընդունի. որուն առթիւ Թրքաստանի և Հելլատայի յարաբերութիւնները խաղաղ դիրքի մէջ կը մտնեն :

26. Սպանիա. Հասարակաց դատարակութեան պաշտօնէին կողմանէ վճիռ մի կ'ելնէ, որով բոլոր կրօնական հաստատութեանց Թղթերն ու յիշատակարանները կառավարութեան ձեռաց ներքե կ'իյնան : — Արդեօք քնն ահուելի յիշատակութիւններ կան . . . Երանի անոնց, որք պիտի տեսնեն, կամ չկարդացած չըպիտի վախճանին — :

Փետրվար 1869

10. Սպանիա. Քուպայի ապստամբութիւնն այնպիսի ընդարձակութիւն մի կ'առնու, որ կառավարութիւնն կը պարտաւորի նոր բանակ մի ևս զրկել այնտեղ :

13. Թուրքիա. Արտաքին գործոց պաշտօնէութիւնն ալ Աալի Փաշային կը յանձնուի և Վէզիրութեան հետ կը միանայ :

15. Հիւսիս . Գերմ . Հէսի Իշխանին գոյքը յԱրքունիա (Բրուսիոյ) կը գրաւուի : — Շիտակն ըսելով՝ 1868 Սեպտեմբ. 24 ի բողոքը՝ Պիզմարքի վրայ բաւական ազդեցութիւն ըրեր է — :

18 Ամերիգա. Միացեալ Նահանգաց և Անգլիոյ կառավարութեանց մէջ (Ալապամայի գործոյն վերաբերութիւն ունեցող) 1868 Նոյեմբեր 10 ի տրուած որոշումը, Ծերակուտի Արտաքին գործոց մասնաժողովոյն կողմանէ կ'եղծանուի և մերժման վճիռ կը տրուի :

» Ծռանա. Կառավարութեան կողմանէ շրջաբերական կը զրկուի Ծռանայի բոլոր ոստիկանութեանց, որով բնակչաց ժողովներուն դէմ կենալու և առաջինէն առաւել ևս խստութեամբ վարուելու հրամաններ կը տրուի անոնց :

» Սպանիա. Առժամանակեայ կառավարութիւնն արտօնութիւն կուտայ Մօնրանսիէի Դքսոյն, որ Սպանիոյ երկիրը կարենայ մտնել ամենայն ազատութեամբ:

28. Ֆռանսա. Ալֆօնս տը Լամարթին, հռչակաւոր բանաստեղծն, այսօր կը վախահանի Մարօնի մէջ, 79 տարեկան (ծնեալ ի 21 Հոկտեմբ. 1790) որոյ յուզարկաւորութիւնն ալ կառավարութեան ծախիւք կը կատարուի:

Մարտ 1869

3. Ամերիգա. Միաց. Նահ. Երեսփոխանական ժողովն՝ միաբան հաւանութեամբ որոշումն ըրաւ յայտնել, թէ իր զգացած համակրութիւնը Սպանիոյ ժողովրդեան ազատամիտ ընթացիցը համար, և թէ Քուպայի Սպանիական կղզւոյն նըկատմամբ ունեցած իղձը՝ անոր անկախութեանը համար:

4. Ամերիգա. Միաց. Նահ. Կրանթնորընտիր Նախագահն իր պաշտօնին անցնելով՝ կը խոստանայ թէ Երկրին օրէնքը ճշդիւ պահել և թէ հասարակաց օգտին համար ունեցած պարտաւորութիւնը խղճիմտօք կատարել:

6. Պելիքա. Երեսփոխանաց ժողովն

իր այս աւուր վճռով կը ջնջէ այն օրէնքը որ մարդը բանտակուծեան կը դատապարտէր պարտքի համար :

8. Սպանիա. Երեսփոխանական ժողովոյն մէջ՝ Մօնթանսիէի Իքսոյն խնամակալութեան խնդիրն յուզուած ատեն՝ երբոր ընդդիմական և տաք վիճարանութիւն յերևան կելնէ՝ Փրիմ յայտարարութիւն կընէ, ասելով Թէ՝ Հանրապետութեան ու Մօնթանսիէի Թագաւորութեան ընտրողութիւնն եթէ ինձ յանձնուէր, իմ հաւանութիւնը Մօնթանսիէի Թագաւորութեան համար կուտայի : ԲասԹէլար այս գաղափարին դէմ իր բոլոր զօրութեամբը կը մարտի :

9. Թուրքիա. Կրետէի նոր կուսակալ Օմէր Ֆէյլի Փաշան ի Կրետէ ժամանելով՝ այս կղզոյն պաշարումն ալ բոլորովին կը բարձուի :

12. Ս.մերիգա. Միաց. Նահ. ձօրճիա և Տըլափար նահանգաց կողմանէ՝ կը մերժուի Սանմանադրութեան մէջի այն յաւելումը՝ որով իրաւունք տրուած էր խափշկաց՝ մասնակցութիւն ունենալ ընդհանուր Բուէարկութեան :

20. Հելլասա. Դեսպանական փոխանորդն ի Կ. Փօլիս կը ժամանէ և Թուրքիոյ

կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնները վերստին կ'ըսկսին :

30 Անգլիա. Սփօրատէս կղզեաց (Արքիպելաքսեան) բնակչաց կողմանէ պատգամաւորներ կը ժամանեն ի Լօնտօն, որոց պաշտօնն է եղեր համոզել Եւրոպիոյ պետութիւնքը՝ միջնորդութիւն ընելու Բարձրագոյն Դրան, որ յիշեալ կղզեակներն անկախ ճանաչէ : — Ասոր կըսեն քաղաքական (դու կարդան, յիմարական) մուրացկանութիւն — :

Ապրիլ 1869

1. Ամերիգա. Մէքսիքայի ընդհանուր ժողովն այս աւուր նիստին մէջ որոշումն կընէ ճանաչել Քուպայի յեղափոխական պատերազմն, իբրև օրինաւոր կառավարութեան պատերազմ :

12. Ֆրանսա. Կայսրն յայտարարութիւն կընէ՝ Թէ առաջին Կայսրութեան ներքև ծառայող բոլոր զինուորաց, 250 ական ֆրք. տարեկան Թոշակ պիտի յատկացնէ, (սկսեալ ի 15 Օգոստոսէ 1869) ցմահ. ի յիշատակ անուան կամ ծննդեան Նաբօլէօնի առաջնոյ : — Այս Թոշակը մէկտարի հազիւ հազ տրուեցաւ. . . զարմանալին այն է, որ Նաբօլէօն Գ. ուզած է իր Գահն այսպիսի նիհար նիցուկներով ամրացնել :

13. Ամերիգա. Միաց. Նահ. Անգլիոյ կառավարութեան հետ Ալապամայի խնդրոյն վերաբերութիւն ունեցող դաշնագիրը կը մերժուի նաև Յերակուտին կողմանէ :

16. Հիւսիւս. Գերմ. Աւագ խորհրդարանի ժողովոյն մէջ առաջարկութիւն կը լինի Միւնսթր Կոմսի կողմանէ, որ յանուն Գերմանական դաշնակցութեան՝ նոր պաշտօնէութիւն մը (մինիսթէր) կազմուի : Պիզմարք՝ մաքառելով ամենայն զօրութեամբ ընդդէմ այս առաջարկութեան՝ կը յաջողի վերջապէս մերժել տալ զայն : — Պիզմարք իր ճամբուն վրայի Թուփերն ու փշերը տարիներով առաջ սկսած է աւելել, և միամիտ Ֆուանսացին, իր անարժան Պօնափառթի Թրոյն ապաւինած, առտուրնէ մինչ յերեկոյ ուզած է միշտ՝ կազաւել, երգել, կամ Թմբուկ չալել... — :

28. Ամերիգա. Միաց. Նահ. Եւրոպիոյ կառավարութեանց մօտ կեցող Ամերիգացի Դեսպանաց գրեթէ բոլորն ալ ամսոյս մէջ կը փոխուին :

Մայիս 1869

1. Հօլանտա. Լիւքսամպուրկի բերդերն ի հիմանէ կը քանդուին :

» Ռուսիա. Ռուսիոյ ընդհանուր ծովա-

պետ Մէնչիբոֆ Ալէքս իշխանն, այսօր կը վախճանի :

2. Ամերիգա. Փէրուչի և Քիլիչի կառավարութեանց կողմանէ Գուպայի յեղափոխական պատերազմն իբրև օրինաւոր պատերազմ կը ճանաչուի :

21. Սպանիա. Երկու ամսոյ չափ վիճարանութիւններ ըլլալէն յետոյ՝ Երեսփոխանաց կողմանէ 21½ (ընդդէմ 7A) քուէի որոշումն արուեցաւ, որ կառավարութեան դրութիւնը Միաւիճակիս ըլլայ : — Ասել է թէ Նաբօլէօն այս խնդրոյն մէջ ալ յաջողեցաւ — :

28. Աւստրիա. Եզիպտոսի Փոխարքայն, (Խըտիվն) ի Վիէննայ կը ժամանէ, Կայսեր այցելութիւն ընելու :

29. Սպանիա. Գանձուց պաշտօնեայն հարցման մը պատասխանելով՝ յայտարարութիւն կընէ Երեսփոխանաց ժողովոյն, թէ զահագուրկ թագուհին 50,000,000 Ռէօ պարտական կը մնայ Սպանիոյ զանձոյն . յայտարարարութիւն կընէ նաև թէ 7½ ծանրագին պատկերներ անյայտ եղած են Սպանիոյ մոսարաններէն (միւզէ), թագուհւոյն կառավարութեան ատեն :

— Այս գէշ առուտուր չէ, բայց թագաւոր ծնանելն ալ ամէն մարդոյ բաղղը չէ — :

» Ամերիգա. Միաց. Նահ. Հնդիկներն
ամսոյս մէջ կըսկսին ստէպ ստէպ յարձա-
կիլ Քէնզասի սահմանաց վրայ, քանդել
այն կողմերն ու յաւարի առնուլ : Նախա-
գահն այս եղելութեանց վրայ լաւ տեղե-
կութիւն ստանալու՝ մանաւանդ այն վայ-
րենիները կըթելու միջոցին կամ եղանակին
վրայ հետազօտութիւն ընելու նպատակաւ
նոր մասնաժողով մի կը կազմէ :

— Եթէ մեր Կորդիբն (Քիւրտ) այս վայրե-
նեաց հետ բաղդատենք՝ Կորդուացիքը
վայրենեացմէ խիստ թշուառ պիտի հա-
մարիմք... հետեւաբար բարեխնամ, հայ-
րախնամ, բարեզուծ և ամենախնամ
բառերը՝ խմբագրաց կողմանէ շոայլուած
շողովութիւններ, ի վնաս և ի կործանումն
Հայ ժողովրդեան — :

Յուճիս 1869

1. Անգլիա. Իռլանտիոյ Եկեղեցեաց
խնդրոյն վերաբերեալ առաջարկութիւնն
Երեսփոխանաց ժողովոյն մէջ ընդունելու-
թիւն կը գտնէ 361 (ընդէմ 247) քուէի :

6. Սպանիա. Նոր սահմանադրութիւնն
ամբողջապէս խմբագրուելով՝ պաշտօնա-
պէս կը հրատարակուի :

11. Ֆրանսա. Ամսոյս 8 էն մինչև ցայս

օր՝ Փարիզի խոռովութիւնն օրըստօրէ կը զօրանայ և հեծելազօր գունդն հրաման կընդունի միջամտել զինու զօրութեամբ :

12. Ծռանաւ. Եգիպտոսի Փոխարքայն ի Փարիզ կը ժամանէ Կայսեր այցելութիւն ընելու, և Եղիւսեան պալատը կը բնակի:

18. Սպանիա. Սէռանօն Սպանիոյ Միսպետութեան Խնամապետ կը կարգուի:

23. Ամերիգա. Միաց. Նահ. Ճորճիոյ Արդարութեան բարձր ատեանն կը վճռէ թէ սպիտակաց ու խափշկաց մէջ լինելիք ամուսնութիւնքն ըստ օրինի անվաւէր են:

» Ամերիգա. Միաց. Նահ. Պայէն անուն Գուպայի զօրապետն, որ Երկրիս մէջ բանակ կազմելուն պատճառաւ բանտարկուած էր, իր բանտէն կը փախի և 800 կամաւորով դէպ ի Գուպա կը մեկնի ապրտամբաց հետ միանալու:

30. Ամերիգա. Միաց. Նահ. Գուպա կղզւոյն ապստամբական յանձնաժողովէն ղրկուած Լըմիւ անուն պատգամաւորն կառաջարկէ Վուաշինկթընի կառավարութեան, որ Գուպացւոց պատերազմն՝ օրինաւոր ճանաչէ, և այս առաջարկութիւնը կը մերժուի:

ՋԱՆԱԶԱՆՔ

ԲՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Ամէն մարդու՝ մանաւանդ երկրագործին երեք տեսակ գործի պէտք է .

Հողմացոյց , Ծանրաչափի և Զերմաչափի .

Հողմացոյցն հովին դէպ ի ուր փչելն ու անոր աստանդական շարժումունքը ցոյց կուտայ .

Ծանրաչափն օրերով առաջ հովին ու անձրեին նշանը ցոյց կուտայ .

Զերմաչափն օդոյն տաքումեան ու ցըրտումեան աստիճանը ցոյց կուտայ :

Պարտիզպանք իրենց տնկոց անկողինները հովէն կամ անձրեէն , նոյնպէս տաքէն ու ցրտէն պահպանելու համար՝ պէտք է ուշիուշով դիտեն ծանրաչափն ու ջերմաչափը և ըստ այնմ հոգ տանին անոնց :

Օրինակի համար . եթէ ջերմաչափը գրօթի մօտերն է , գիտէ երկրագործն որ նոյն գիշեր անշուշտ պիտի սառէ , ուստի պէտք կը համարի տնկոց անկողինները իրիկուը նէ ծածկել . Եւ պայծառ աւուր մէջ երբ որ գրօթն վեր (12էն 18 ին մէջերը) կը տեսնէ զայն՝ պէտք կը համարի անկողնոց ծածկոցը վերցընել :

Բաց ի այս արհեստական գործիներէն բազմաթիւ նշաններ ալ կան, որ բնութիւնը ցոյց կուտայ մեզ. որոց հետամուտ լինելն օգտակար համարելնուս համար՝ մեզ նպատակ առինք անոնց վրայ միայն խօսել համառօտիւ:

Նշանք

Երբոր լուսինն ու աստեղք Թխագոյն շրջանով մը պատեալ կ'երևին, նշան է այն՝ որ քանի մ'օրէն պիտի անձրևէ:

Պարզ և անամպոտ եղանակաւ՝ երբոր երեկոյեան տաք ատենին փայլատակէ, նշան է այն սաստիկ տաքի և չորութեան:

Ամրան անձրևէն յետոյ՝ ամենախիտ մըշուշն է նշան պայծառ օդի:

Բարեխառն օդի ժամանակ երբոր հորիզոնը մշուշով կը պատի կամ թէ վարի մըշուշը վեր կ'ելնէ, նշան է այն անձրևի:

Երբոր արևմտեան կողմը խիտ ամպով պատած լինի, քանի մ'օրէն կանձրևէ: Իսկ եթէ արևն ամենախիտ ամպերու մէջ մուտք ընէ, հետևեալ կամ երկրորդ օրն անշուշտ պիտի անձրևէ:

Արևմտեան հովն անձրև կը պատճառէ, իսկ Հարաւային արևմտեանը՝ փոռորիկ: Նոյնպէս Հիւսիսային հովն անհաստատ

յոսմ թոյլ սառնամանիք կը պատճառէ, իսկ Արևելեան Հիւսիսայինը հաստատուն (1) :

Ամպերն երբոր խատուտկանան կամ գանգուրի ձև առնուն և հովն աստանդակոն շարժման մէջ գտնուի և արևմտեան կողմն սկսի սաստիկ կարմրանալ, նշան է այն փոթորկի :

Երբոր ամպերն հետզհետէ դիզուին ու մծնուլորտին վրայ սաստկապէս ծանրանան, նշան է այն փոթորկի :

Անամպոտ ժամանակ երբոր աստեղք իրենց փայլն յանկարծ կորուսանեն, նշան է այն փոթորկի :

Երբոր հովի մը սաստկութիւնը բոլոր օր տեէ և ընդ երեկոյս դադարի, հետեւալ առուր արշալուսին դարձեալ կը սկսի ընդհանրապէս :

Փոթորիկէն առաջ՝ անհեթեթ հովն ընդհանրապէս իր շարժմանէն իսկոյն կը դադարի :

Անճրելի եւ փոթորկի նշաններ

կենդանեաց վրայ :

Այէն երկրի գաւառացի երկրագործաց մեծ մասն իրենց օդային գուշակութիւնը

(1) Զերմաչափն օրերով առաջ ասոնց փոփոխութիւնը ցոյց կուտայ :

կենդանեաց վրայէն կ'առնուն, և Գորշա-
կորշիւնի օդոց շինող կտակաւոր Անձանց
վրայ քթերնուն տակէն կը խնդան:

Եւ ահաւասիկ անոնց մէկ մասը.

Մեղուներն իրենց փեթակէն չեն հեռա-
նար.

Մրջիւնք իրենց սովորական ընծացքն
առաւել ևս կը փութացընեն:

Ծիծառնիկն սկսի երկրին ու ջրերուն
երեսէն թռչըտիլ, իսկ վայրի Ծիծառն
(Մարթը) բարձրերեն:

Ամէն տեսակ թռչունք սկսին ցանկերու և
մացառներու մէջ քաշուիլ:

Զիւլը (գիշեր հաւուկ) ցածէն կը թռչը-
տի և շէնքերու տակ ապաստանարան կը
փնտռէ:

Որիներն (Գարա գարկա) սկսին յիրան
անցնիլ և ասդիս անդին թռչըտիլ:

Կարապն (Թօյ գուշու) հովուն դէմ կը թռի:
Ճօիններն սկսին հողէն դուրս ելնել:

Ճանճ, Մժեղ, Լու, Մլուկ և այլ սոցա
նման խածանող կենդանիք, սկսին սովորա-
կանէն աւելի կճել զմարդ և զանասուն:

Էշն ստէպ ստէպ ականջները կը թօթուէ:
Խոզերն սկսին իրենց խշտեաց վրայ
Պաւալիլ:

Եղջերաւոր կենդանիք սկսին խխնջալ

կամ ռնգաշնչել ու անկեանց մէջ կծկըտիլ :

Կատուն սկսի գլուխը շիել ու քամակը կրակին դարձնել :

Աքաղաղն սկսի իւր սովորականէն աւելի և ստէպ խօսիլ ու թևերը թօթուել, մահաւանդ գիշեր ատենին :

Հնդկահաւք, Սագերն ու Բադերն սկսին մեծ շշուկ հանել. Այս վերջինները խիստ կը շփոթին ու ջրերուն մէջ թռչըտելով ասդիս անդին կը թափառին :

ԳԵՏՆԱՇԱՐԺ ՓԷՐՈՒԻ

1868 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Բնութեան ժամանակակից պատմութեան մէջ ամենէն սարսափելին համարուած է այն հեղեղամած գետնաշարժն, որ ի Փէրու (Հարաւային Ամերիկայ) պատահեցաւ, և ուր տասն քաղաք, 30,000 բնակիչ և մէկ միլիառ (հազար միլիօն) ֆրանքի հարըստութիւն կորսուեցան :

Օգոստոս 13 ի երեկոյեան դէմ սկսաւ գետնաշարժն ու տևեց մինչ ի 16, վայրընդմիջական շարունակութեամբ :

Առաջին ցնցումն ուժը վայրկեան տևեց, յորմէ Անտէզեան շլթայից մէկ ահագին մասն ու նոյն լերանց ստորոտի Արէքիզա

քաղաքէն մինչև Արիգա ծովեզերիայ քաղաքի միջոցը սարսեցան : Երկիրը պատանեցաւ ու շատ տեղ կարմրագոյն ջրեր ցայտեցան չափազանց : բարձրութեամբ ամէն ակունք և գետք՝ սատկապէս յորդեցան վայրկենական միջոցին :

Գետնաշարժէն յետոյ ամէն ակունք ցամքեցան և Թշուառ բնակիչք առանց ջրոյ մնացին . Նոյն ատեն՝ մեծալորտն այնքան խաւարեցաւ որ՝ հինգ մէքո հեռաւորութեամբ՝ կարելի չէր բան նշմարել :

Թագնա քաղքին բոլոր շուրջն (գիշերատենն) յանկարծ փայլեցաւ՝ վայրկենի չափ տեղողութեամբ, ամենապայծառ լուսով . քիչ ատենէն այս լոյսն երկրորդեց ու տեւեց նոյն չափ , բայց ոչ այնքան փայլուն :

Երկրաշարժի առաջին սաստիկ ցնցման ատենն (13 ին) ծովը անօրինակ կերպիւ խըռովեցաւ ու մանրախիտ յորձանքով սկսաւ ամէն կողմ յուզուիլ և ընթանալ անհնարին արագութեամբ : Արիգայի եզերքէն ամենասաստիկ հոսանք մ'առաջ եկաւ յանկարծ , և այն տեղի նաւերուն շղթաները խորտակելով՝ քշեց նաւերն ու վահեց զանոնք դէպ ի յարեժուտս , ուր որ ինքը կ'ընթանար : Քսանը հինգ վայրկեանէն յետոյ՝ այս հոսանքն իր ընթացքը փոխելով՝ սկսաւ

յարեմտից ի հարաւ ընծանալ նոյն իսկ արագութեամբ և այս անագին խաղացքը յերիցս կրկնելով՝ ծովեզերքն երեք անգամ ցամբեցուց բոլորովին, և վերագարծ ըրաւ՝ աւելի քան զ40 մէծն բարձրութիւն ունեցող սպիքով, փշրեց ու սարսափելի հարուածներով անհետացուց նաև այն լեռանց բեկորներն, որք առաջին ցընցման սաստկութենէ Թէպէտ և բեկուած, բայց դեռ կանգուն կեցած էին:

Այս կերպիւ անհետացան, Արիզայի հետ, նաև Իզա, Թագնա, Մօնթէկա, Արէթիբա, Ինթիթէ և այլ քաղաք Փէրուի:

Նորասեսիլ ալի (Տաշկա) մի

Վերոյիշեալ գեանաշարժէն առաջ և կամ այն նորասեսիլ Ալին, որ իր արագոյոր և անասնման աղկութեամբն (օնսիւլասիօն) երկրագնախա մէկ երբորդ մասի վրայէն անդրընծանալով՝ անցաւ գնաց անարկուտեւեամբ և անհնարին արագութեամբ, ու հապաւ մինչ ի յեզերս Աւստրալիոյ:

Ի սկզբան Թէ և կրհակիս աղկութիւնն արագ էր, բայց հետզհետէ այնպիսի անակրկալ արագութիւն մ'ատացաւ՝ որ Մեծին Ուկկիանու ջրերն ամենայն սաստկութեամբ յուզելէն յետոյ՝ իր ճամբուն վրայի Խա-

ղաղական Ովկիանոսն ալ բոլորովին խոտ-
վեց, խորտակելով անոր մէջ գանուած բազ-
մաթիւ փոքր կողեաց մեծագոյն մասն՝
ամենարուռն ընդհարմամբ :

Այս կոհակին երկայնութեան և բարձ-
րութեան վրայ ամենափոքր գաղափար մի
ունենալու համար՝ բաւական է գիտնալ թէ
իր բախմանէ առաջ եկած կտորներու
մէկին երկայնութիւնը 8,000 մլթն և բարձ-
րութիւնը 25 մեթն չափուած է Խողազա-
կան Ովկիանոսի կեցիկ (սրա իօսնէո) նա-
ւաց հրամանատարի կայանէն :

Իսկ արագութեան վրայ գաղափար մի
ևս ունենալու համար՝ բաւական է գիտնալ,
որ Փէրուի գետնաշարժէն (Օգոստոս 15ին)
առաջ եկած ալին, Նոր Հօլանտայի եզերքն
հասաւ Օգոստոս 15ին, և ամենայն խշտիւ
իր առաջն ելած ծովեզերեայ շէնք և այլ
նիւթական բաներ տապալեց ու քանծեց :

Իր գալստեան առաջնորդ եղած էր խա-
ղաղ՝ բայց ահագին կոհակ մի, որ ծովուն
տակի տատանումէն յառաջ շարժելով նա-
ւերն անզգալի արագութեամբ դէպ ի յեր-
կինս բարձրացնելէն յետոյ՝ ծովեզերքը կը
գոռացընէր ալեաց ահագին ձայնիւ. և
սպա, ի քՅԾել ական և սպառնալից
զօրութեամբ կը հասանէր, ամէն ժայռ և

լեռ խորտակելու և ամէն տեղ հեղեղելու պայմանաւ, յետոյ առաւել ևս շտապաւ կը խաղար կանցնէր, հովի արագութեամբ, մէկ վայրկենին 10,980 մէթոն կամ մէկ ժամին 165 Գաղիական մղոն տեղ ընթանալով:

Վերջապէս այս նորատեսիլ Ալին՝ իր տարօրինակ և ահուելի կատաղութեանը տխուր նշաններն անցած տեղերուն վրայ ձգեց ու սլանալով անհետացաւ:

ՆՈՐ ՀՆԱՐԻ ՄԻ

Տներն ի հիմանէ բարձրացնելու համար՝ Ամերիգացի նարտարագէտք նոր հնարք մի գտան, որ առաջին անգամ լսողին անհաւատալի, փոքր ինչ հաւատացողին ալ խիստ վտանգաւոր թուեցաւ. բայց գործը ցոյց տուաւ որ չէ՞ թէ միայն կարելի՞ այլ և անվտանգ ձեռնարկութիւն մըն էր այն:

Առաջին փորձն եղաւ Չիգակօ բաղքին վրայ. որ Միքիկան լճին եզրը շինուած՝ երբեմն հեղեղի և մշտնջենաւորապէս խոնաւութեան ենթակայ էր, այնպէս որ փողոցներէն լճացեալ ջրերն անպակիւս էին:

Այս կացութեան դարման տանելու համար՝ պէտք էր կամ տները վերստին շինել և կամ նոր հնարիւք բարձրացնել զանոնք

գետնայատակով հանդերձ: Յանդգնեցան այս վերջնոյն ձեռնարկութեան և յաջողեցան:

Հնգայարկ մեծ պանդոկ մի, որուն ծանրութիւնը 18,004,000 սխաէր, բուն առաջին գետնայարկէն վեր հանեցին մինչև 12 ոտք (մէկ Անգլ. ոտքը 31 $\frac{1}{2}$ սանթիմէթրի հաշուով. 3 $\frac{3}{4}$ արշըն), բարձրութեամբ:

Այս գործողութիւնը 600 բառնալիքի (CRIC) միջոցաւ 27 աւուր մէջ կատարուեցաւ՝ այնպիսի ճշգուծեամբ ու կանոնաւոր կերպիւ, որ պանդոկին մէջի թէ՛ ծառայութիւնը և թէ՛ անոր երթևեկութիւնը վայրկեան մ'անգամ չարգիւռեցաւ:

Փարիզի մէջ, մերաջացառջև, աշտարակաւոր անագին աղբիւրի մը յատակը բրելով՝ բոլոր շէնքը ուղիներու վրայ հեծուցին և այն էս մէկ հրապարակէն միւսը տարին, զարմանալի ճարտարութեամբ:

ԽԱՂՈՂ ՊՍՀԵՆՈՒ ԿԵՐՊ

Լսեցինք որ Չմբան համար խաղող պահելու հետամտողներ շատ կան, արժանաւոր գնով ծախելու կամ հարսանեաց և խընճոյից սեղան զարդարելու նպատակաւ. վասնորոյ ուղեցինք իրենց օգնել հետևեալ տեղեկութեամբ:

Խաղող պահելու շատ միջոցներ գտնու-
ած են մինչև ցարդ, բայց անոնց և ոչ մէկը
կարող եղած է այս Նոյեան պտուղն իր
բնականին մէջ պահել, առանց կրտսեցնե-
լու կամ եփած խնձորի նմանցնելու զայն:

Երևելի Պ. Քաէսան՝ անոր պահպանու-
թեան բնական միջոցը գտած ու յաջողած է.

Աւ ահաւասիկ ինչպէս.

Ողկոյզը կրող ուռը՝ կտրելու է, անոր
վարի և վերի կողմերէն քանի մը պտկունք
(աչք) ձգելով, և ուռին ծայրը ջրալից Թա-
ղարի մէջ դնելու է ողկոյզը դուրս կախե-
լով՝ ծաղիկի կամ փունջի նման: Այս ա-
մանն անշուշտ հողէ պիտի ըլլայ մեր Գաւ-
առաց մէջ, բայց Պօլսեցեոց համար աւելի
լաւ է գիւնկոյի տնանն, որ այս նպատակին
համար յատուկ շինուած է բոլորատիրը ճեղ-
քերով կամ առուակներով: Ներփակեալ
ջրերն ապականութենէ զերթ պահելու հա-
մար Սիւլֆար ջր թեռ (սաչը գըպրըզ) կամ
ածուխի փոշի դնելու է անոնց մէջ:

Վերոյիշեալ գիւնկոյի Թաղարին ձևով
շատ դիւրութեամբ հողէ աման ևս կրնայ
շինուիլ, որ ինչպէս միոյն, նոյնպէս և
միւտոյն մէջ՝ մինչ ի Մայիս՝ այն աստիճան
Թարմ և անկոխն կր մնայ խաղողն, որ կար-
ծես Թէ այգիէն դեռ նոր կ'ընուած է:

ԱՄՊՐՈՊ (Յուսժ)

Մէքսիքայի Սօնորա նահանգին կողմերն, ուր հազիւ հազ կ'անձրևէ, և երկիրն քը կապտագոյն պարզութեամբ մշտնջենաւորապէս կը փայլի, 1868 Հոկտեմբեր 15 ին յանկարծ խաւարեցաւ թանձրամած ամպերով. հուսկ յետոյ անձրևել սկսաւ ջրհեղեղի նման:

Ամպրոպն հետզհետէ սաստկանալով բոլոր նահանգին մէջ, մինչև ստորին Քալիֆորնիա տարածեցաւ և այն տեղի լօռէթաքաղաքն ի հիմանէ կործանեց՝ մէկ եկեղեցի միայն կանգուն ձգելով: Միւլէյէի ջուրն ուժ ու կէս մէթո. բարձրացաւ. Եարի գետոյն բարձրութիւնն ալ մինչև 12 1/2 մէթո. ելաւ. վերջապէս բոլոր երկիրն ջրով ծածկեցաւ, ուր և անհամար Հնդիկք հեղձան:

Նոյն տմսոյն 17 ին Ալամօսի մօտ Թաւառ մի երևնալով պայծեցաւ. հետևեալ օր տեսան որ քաղաքի շատ տները դէպ ի յերկինս ծծած միանգամայն եօթանասնի չափ անձինք հեղձուցած էր:

Այս 1868 տարւոյն մէջ Ամերիգայի այն կողմերը սաստիկ Ամպրոպ, Փոնորիկ և Ինսնաշարժ ստէպ ստէպ պատահեցան ու մեծամեծ վնասներ պատճառեցին:

ՀԻՒՍՍԱՅԳ

Այս անուն տրուած է այն գեղեցկափայլ օղերևութներուն, որոնք շատ անգամ Հիւսիսային բևեռի մօտերն՝ երբեմն ալ դէպ ի Հարաւ գտնուող Երկիրներու մէջ կ'երևին երկնից Հիւսիսային կողմը:

Այս լուսաւոր երևութներու մէկն, 1870 Հոկտ. 12/24 ին Թրքաստանի այլևայլ (ինչ պէս Կ. Պօլիս, Իզմիր և Կարինի) կողմերէն տեսնուեցաւ շառագոյն աղեղան ձևով, որ ի սկզբան հրդեհի կարմրութիւն կարծուեցաւ:

Դիտուած է, որ Հիւսսայգ (Հիւսիսափայլ կամ Բեւեռային Արշալոյս ևս կըսվի) երեցած ատեններ՝ մթնոլորտի մէջ էլեքտրականութեան յաւելման նշաններ կան. կողմնացուցին վրայ վրդովումն կամ անհամդարտութիւն կընշմարտի երկու կամ երեք ժամ առաջ, և օդին մէջ շառագման ձայներ կը լսուին՝ իբրև նշան էլեքտրական հոսանքի, որ կ'ընթանայ մթնոլորտին մէջ: Բոլոր այս նշաններն ցոյց կուտան թէ այս օղերևութի պատճառն էլեքտրականութիւնն է: Բնագէտքդեռ ճշդիւ հասկըցած չեն թէ լուսաւորութիւնն ո՛ւստի յառաջ կուգայ:

Հիւսիսային երկիրներու մէջ այս երևութի գոյնն ամէն ատեն նոյն և նման չէ,

և երբեմն այնպէս պայծառ՝ որ մարդ՝ կըրնայ նոյն լուսով կէս գիշերուան մէջ անգամ կարդալ: Երբեմն լոյսն ուղղակի կը ճառագայթէ հորիզոնէն, երբեմն ալ երկու ծայրերովն հորիզոնի վրայ կեցող կամարէն: Երբոր այս ձևը պատահի՝ շատ անգամ կը մժննայ երկնից այն մասն՝ որ կամարին կամ աղեղան տակն է և կամարի եզերքէն լոյսը դուրս կը հոսէ ամենափայլ պայծառութեամբ: Լուսին հոսանքը կամ ճառագայթները, հովէն աղկացեալ ցորենոց արտինման, վէտ վէտ կը տատանին և այս երբեմքն արագ՝ միանգամայն գեղեցիկ շարժման ատեն՝ լուսոյ աղկութեան մէջ՝ անհամար ատուպներ կ'երևին որոնք կայծի արագութեամբ այսդիս անդին օձաձև կը սլանան:

Երբեմն լոյսն՝ փոխանակ հոսանքի կամ շառաւիղի պէս ճառագայթելու՝ մժնորտը կը լեցունէ, այնպէս որ տեսնողն ինքզինք լուսոյ ամպերէ շրջապատեալ կկարծէ:

Հիւսսայգն երևցաւ նաև Փարիզէն, 1869 Ապրիլի 15 — 16 ի գիշերն. որ ամպամած հորիզոնին վրայ անյարդ ուղղութիւն ունեցող լուսոյ մը տարածութեան վրայէն՝ ճառագայթներն զէպի Զենիթ բարձրացան, անհամար ատուպներու ցայտմունք միանգամայն անոնց մէջ տեսնուելով:

ՀԱՆԴԷՍՔ ԵՒ ԼՐԱԳԻՐՔ

Ա.ՁԳԱՅԻՆ

| | | |
|------------|-----------|------------|
| Ա.բարս | Ամսական | յէջսիածին |
| Ա.բալոյս | Կիսամսեայ | յիգմիր |
| Ա.Լեւսաբեր | Շաբաթական | ի Կ. Պոլիս |
| Բազմամկայ | Ամսական | ի Վէլնէսիկ |
| Դիսակ | Շաբաթական | ի Կ. Պոլիս |
| Երկրագունդ | » | » |
| Ծիածան | Պատահական | » |
| Հայրենիք | Շաբաթական | » |
| Հորիզոն | Երկօրեայ | » |
| Մամուլ | Եռօրեայ | » |
| Մանգումէ | Օրական | » |
| Մասիս | Եռօրեայ | » |
| Մեղու | » | » |
| Յայս | Կիսամսեայ | յԱրմաւ |
| Սիօն | Ամսական | յԵրուսաղէմ |
| Փող | Երկօրեայ | ի Կ. Պոլիս |
| Փունջ | Շաբաթական | » |
| Օրագիր | Օրական | ի Կ. Պոլիս |

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Մեր 1870 թուականի Տարեցուցին մէջ՝ ծանուցում ընելով՝ խնդրած էինք որ Գաւառական Ազգայինը հաճին ղրկել իրենց Գաւառի վիճակագիրը: Երկու տեղէ միայն տեղեկութիւն գրեցին մեզ, վասնորոյ պիտի սպասենք որ ուրիշներն ալ ղրկեն զոնէ նշանակելու չափ մաս մը որ կարեւանք 1872ի Տարեցուցին մէջ տպել:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Թիւ 8 (*)

Կայի — չըկամ, Չըկայի — կամ,
 Այսպէս էի, Է՛նք յարածամ,
 Ինչ ունիս բեր, տուր ինձ կուլ տամ,
 Վերստին ուղէ՛ անմարս ետ տամ:
 Երբոր Թևօքս յաշխարհ վանիս՝
 Մի սէրս պղղծեր. Միտ դիր խօսքիս .
 Չըլլան Թէ կողերուս դըպիս,
 Որ մի գուցէ յաստեաց փոխիս,
 Այս ըսածէս մի վախ բերեր,
 Ման խօսեցայ, բայց միտքս մյն չէր .
 Ձի Տէրն է ինձ պաշտօն տուեր,
 Բաշխել միշտ կեանք, վիշտ, յոյս և սէր:
 Ձի երբ հեռիւ գաս՝ քեզ կը մեղմեմ,
 Սըրտիս զարնես՝ քեզ կը գրկեմ .
 Շատ հեղ վերքիդ վուշ կը կապեմ
 Ի՛ամէն պահանջքըդ կը առժեմ:

(*) Ինչպէս որ Գարնան պատկերին
 ներքեւ ծանուցած ենք, Այս 8 թիւ հա-
 նելուկին համար (նոյնպէս եւ 9 ին, եւ
 10, 12, 13 ին, որք չեն լուծուած)
 նուէրները պիտի կրկնուին եւ 20 ժը-
 ուանհոց զիրք պիտի տուի լուծողին:

Ճ. Ա.

ԵՐՔԵԻԵԿԻ

ՖԷՎԱՅԻՏԻ ՕՍՄՆԻՑԷ ՇՈԳԵՆԱԻԱՑ

ԳԻՄ ՏԲԱՊԻՉՕՆԻ

Մեկնի Ձորեքշաբթի Օրեր երեկոյ. ժ. 10 Տհակ.

Կ. Պօլիսէն յԵրէլի, յԱհասիա, յԻնէպօլի, Ի Սիւսօյ, Ի Սամսօն,
Ի Բիւլիա, յՕրտու, Ի Կիրասօն, Ի Տրապիզօն, Ի Տիգէ, Ի Պաճուս :

ԳԻՄ ՍՆԱՆԻՍ

Կ. Պօլիսէն Ի Կէլիպօլու, Ի Չանաք-քալէ, Ի Լիւսեա, Ի Քարաղան,
Ի Քալալա, Ի Աէլանիկ, Ի Վօլօյ :

ԳԻՄ ԿԻՐԻՏԻ

Երեքշաբթի Օրեր, երեկոյ. ժ. 10 Տահկ.

Կ. Պօլիսէն. Ի Կէլիպօլու, Ի Չանաք-քալէ, յԱյլալէք, Ի Միսիլի,

ի Տիբէլի, յիզվիբ, ի Սաբլլզ, ի Հանեա, ի Րէամօ, ի Բանախա :

ԳԻՎ ԹԼԲԻՐՏԱՂԻ

Երեքշաբթի եւ Շաբաթ Օրեր, ի ծագ . արեգական

ի Սիւիվրի, ի Թէքիլուաղ :

ԳԻՎ ԵԶՄԻՏԻ

Ամառն ամեն Օր . իսկ Չմեռն, Երկուշաբթի, Չորեքշաբթի,
Հինգշաբթի եւ Շաբաթ, ի ծագ . արեգական

ի Տարլճա, ի Գարամուսալ, ի Տէյիքմէնտէրէ, յիզմիտ :

ԳԻՎ ՊԱՆՏՄԱՅԻ

Հինգշաբթի Օրեր, ի ծագ . արեգական

ի Բէրէձէ, ի Պանտլլրմա :

Առօրեայ երթեւեկութիւնք . ի Մալթէփէ, ի գարթալ ե ի Բէնտիկ



ՅՈՒՑԱԿ ԳՐԵԱՆՑ

Գ Ր Ա Տ Ա Ն Փ Ա Ր Ի Զ Ո Ի

Ստորագրողքս պատկեր, ոսկեգոծ հասարակ
Նարնկ մեծ, փոքր, պատկեր, փառակազմ հասարկ,
Գասարան Հայկ, մանկանց բազմպատկ,
Թուարամուրթի Գասար Ս Մերայեյեանի
Նայն համան. օճ

Համան. օճ Գասարան Հայ, Գոանս Տան
Բառգրեւի » » »

Նդիտ

Եզնիկ Բ. Տպագր, ոսկեգոծ փառակազմ լամակազմ

Միւլիօ Ռէւիֆօ . Բ . Տպագրուելուն

Գստեղ առաքինիք վիպասանուելուն

Փելիսեւել Պաւլինէ պատկ, փառակ, հարկ

Ընդունելուքին Ընծայի, Կրկնիկեան

Խնդիր Միւլիֆեան Հայոց

Հասրնիք Բաղուածք Ա. Մ. Վ. Գարագաշեան

Նեռն կամ Կասարած Ածիւսիք

ՆՈՐԱՏԻՊԻ

Գործնական Քերականութիւն Հրահան-

գորել Լուծմամբ ի պէտս Գայրոցաց. Ա. Մ. Վ. Գ.

Տարեղ Բաղական Տնտեսութեան

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Ս. Առակի Բռիլովի Թարգ. Գ. Նոյ. Այլագեան,

Մարիս եւ Մելիք-Ա. Սիւ Թարգմ. յԾառայ.

Գաղսնիք Հաւաստեմունքեան, Գառնիք.

ՅԶԳԳԳ

« Ազգային գրադարան



NL0109870

